

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՎԱՐԻԱ
Տարեկան . . 12 ծր.
Վեցամսեայ . . 6 „
ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ
Եւկու թիւ լեկի ծրարով
Տարեկան . . 14 ծր.
Վեցամսեայ . . 7 „
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 „
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշարնակ տողը
20 սանդղակ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՅԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոթիզնը եւս
լեւ տրոթիք

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդները՝ որոնք
դեռ չեն հասած իրենց ներկայ
տարւոյ բաժնեգիրը վճարել, կը
խնդրուի որ փութացնեն. ճարտը
ի նկերորդ ամիսն ալ կը յրանաջ.
միւսը յիշուի բաժնեգիրը
պետք է կանխիկ վճարել:

ՍԱՄՈՒԼԸ ԵՒ
ԹԱՏՐՈՆԸ

Քաղաքակիրթ երկիրներու մէջ,
ինչպէս դպրոցը մանուկներու կըր-
թարանն նկատուած է, նոյնն է
թատրոնը հասակաւորներու համար:
Ճիշդ այս պատճառաւ կառավարու-
թիւնները ինչպէս վարժարաննե-
րուն նոյնպէս և թատրոնին մաս
նաւոր գումարներ կը յատկացնեն,
որպէս զի այս վերջինը միայն իր կոչ-
ման բարձրութեան վրայ և շա-
րունակ հրահանգէ ժողովուրդին
միտքը, անոր պարտաւրդը և գրո-
սանքի ժամանակը, հրահանգիչ
տրամաբանութիւնը և բարոյախառն գա-
նչանքները:

Եւրոպական ազգերու մէջ նուազ
քաղաքակիրթ նկատուած ուսուկա-
ռավարութիւնն իսկ խոշոր գու-
մարներ յատկացուցած է թատրոնի
ու գերասանական խումբերու.
ուսական քաղաքներու մէջ ամենէ
աւելի աչքի զարնող հոյակապ շէն-
քերը թատրոններն են, զորս կա-
ռավարութիւնը կամ քաղաքապե-
տութիւնը իր ծախքովը կ'առու-
ցած է:

Եւրոպական մամուլը խոշոր էջեր
կը յատկացնէ թատերական քո-
նիքներու, խմբագիրներ կ'ետ առ-
կէտ կը հետեւին թատերաբեմի
տեսարաններուն. հոն ներկայաց-
ուած լաւ ու հրահանգիչ կտորնե-
րուն և յաջողութեամբ իրենց դերը
կատարող գերասաններուն գովեստ-
ներ կը կարգան ու դրուատիքնե-
րու գովիներ կը հիւսնեն անոնց
ճակտին ի քաջալիրութիւն. իսկ
բնւ հանուած կտորներու (բեմ)
անյարմարութիւնը, դերասաննե-

րու թերութիւնը ու ապկարու-
թիւնը հաւասարապէս կ'ծու քն-
նադատութեանց դուռ կը բանան.
մամուլը կ'շտաժանքի և ծաղրի
տարաք մը կը տեղացնէ անոնց
վրայ:

Մէկ խօսքով, թատրոնը, հա-
սակաւորներու այդ կրթարանը իր
նպատակին ճշգիւ ծառայեցնելու
համար մամուլը անոր վրայ վե-
րին հսկողի պաշտօնը ունի ազատ
երկիրներու մէջ, ինչպէս կրթա-
կան տեսչութիւն մը իր իրաւա-
սութեան տակ գոնեւոր վարժա-
րաններուն վրայ:

Մեր դերասանները կամ թատե-
րախումբերը զուրկ ըլլալով կա-
ռավարական նպատակներէ, եթէ
մամուլը զանոնք ալ աւելի քաջա-
լիրութեամբ մը ունի, միեւնոյն
ատեն մեծազոյն իրաւունքն ունի
անոնցմէ նպատակայարմար ու հրա-
հանգիչ տրամաբան և բարոյախառն
գաւառներ սպասելու:

Մամուլին, մանաւանդ հայ մա-
մուլին, դէպի դերասանական խում-
բերը ունեցած վերաբերութիւնը
երկու բնուով բացատրելու համար
բնւ թէ՛ մամուլը կը նկատէ թա-
տերաբեմ, միայն թատրոնական
ցոյցիչ հաստատութիւն մը, և այս
նկատուածով միայն ինքզինք պարտա-
ւոր կը զգայ զանի բաժնիւնը:
Բայց երբ թատերախումբերը բե-
մին այս կոչման դէմ կը մեղանշեն
և զանի հասարակ գրաստապարտ
կամ ալլանդակ ու անխմաստ
պողտութիւններու յատուկ ժամադ-
րովայրի մը կը նմանցնեն, բնաւ
իրաւունք չունին մամուլէն քաջա-
լիրութիւն սպասելու և անոր կ'ծու
քննադատութեանց դէմ դժգոհու-
թիւն յայտնելու: Այս պարագային
անկաշկանդ մամուլը պարտի իր
խտրազանի շտապելուն լսելի ը-
նել, մինչև որ յաջողի ուղղու-
թեան բերել թատերաբեմի կո-
չումը թիւր ըմբռնող դերասան-
ները:

Մամուլի դէպի թատրոնը և
մանաւորապէս մեր դէպի հայ գե-
րասանական խումբերը ունեցած
վերաբերութիւնը այս տողերով
համառոտակի բացատրելէ յետոյ,
կը կարծենք որ Պուլկարիոյ երկու
հայ թատերախումբերը—Վեկլիո՝

(Ուրաի) Պ Պէնիանէ առաջնոր-
դուած և Նառեժուա՝ (Զոյս) Պ.
Պապանով—պիտի ըմբռնեն թէ
մենք իրենց նկատմամբ մեր պար-
տականութիւնը անկաշկանդ ու ա-
ռանց կանխակալ նկատումներու
պիտի կատարենք, միմիայն մեզ
նպատակակէտ ունենալով թատրոնը
իր կոչումին բարձրութեան վրայ
պահել:

ԳՈՒՐՈՒԹ

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հրէական խնդիրը միջազգային
անկնկալ աժմէութիւն մը կը ստա-
նայ, շնորհիւ այն ծանուցագիր-
Շրջաբերականին զոր Միացեալ-
Նահանգներու պիտական քարտու-
ղարը (արտաքին նախարար) Մ. Մ.
Հէյ՝ ռումանական հրեաներու ար-
դի աննախնայելի կոտորածները
վերաբերութեամբ ամերիկեան դեմ-
պաններուն ուղղած է. այդ ծանու-
ցագիր-Շրջաբերականին մէջ, Մ. Մ.
Հէյ կը հրաւիրէ իր ներկայացու-
ցիչները որ 1878 ին Պէռլինի համ-
բաւաւոր Դաշնագիրը ստորագրող
պետութեանց նկատողութեանը
յանձնեն Ռումանիոյ հրեաներու
վիճակը. արդարեւ, Պէռլինի Դաշ-
նագրին մէջ 44րդ յօդուած մը
կայ, որ բառ առ բառ հետեւեալ
կերպով խմբագրուած է. «Ռումա-
նիոյ մէջ կ'ընտան հաւատքի ու
գաւառանքի տարբերութիւնը պատ-
ճառ պէտք չէ նկատուի որ և է
մէկը զրկելու իր քաղաքացիի ի-
րաւունքները վայելելէ, հանրային
պաշտօն ու պատիւ ընդունելէ,
կամ որ և է վայր գանազան ար-
հեստներու պարտապիւլէ»:

Այս յօդուածին գրեթէ բոլորութիւ-
նը մեծ պետութեանց կողմէ իբր
պայման դրուել էր Ռումանիոյ
անկախութիւնը ճանշնալու համար.
ռումէն կառավարութիւնը խօստա-
ցաւ երկրին Մահմանդարութենէն
1868 ին քուէարկուած 7րդ յօդ-
ուածը, որուն համեմատ քրիստոն-
եաները միայն քաղաքացի կրնային
ըլլալ, փոփոխել, եկուր նայէ որ,
անգամ մը իր անկախութիւնը
գտնելուն պէս, ռումէն կառավա-

րութիւնը ամէն խոստում մոռցաւ.
ու այսօր երբ Ամերիկեան կը միջա-
մտէ, ռումէն մամուլը բարձրօրէն
կաղաղակէ թէ ոչ ոք, ոչ իսկ Եւ-
րոպան իրաւունք կրնայ վայելել
իրենց ներքին խնդիրներուն կար-
գադրութեանը մասնակցելու...

Մ. Մ. Հէյի ծանուցագիրը սակայն
կը թուէ թէ հրեաները 1) իրենց
առջեւ հանրային պաշտօնները ու
ազատ տապալէզները (բժիշկ, փա-
տարան) փակ կը գտնեն. 2) հոգ
չեն կարող գնել, նոյնիսկ զայն
իբր գործաւոր մշակել ալ չեն կա-
րող. 3) չեն կրնար գիւղերու մէջ
բնակիլ, ոչ ալ ձեռարհաստով ու
մանր առուտրով պարագիլ քաղաք-
ներու մէջ, ուր հարկադրուած են
միայն իբր գործաւոր աշխատելու.
այս պարագային մէջ ալ միշտ ի-
րենց թիւը ռումէն գործաւորներու
թիւոյն կէսէն աւելի ըլլալու չէ.
հետեւապէս, առօրեայ կեանք մը
իսկ անկարելի դարձնող այս քա-
հաճ արգելքներու հանդէպ, Ռու-
մանիոյ թիւով 400,000 հրեայ աղ-
գաբնակութիւնը հարկադրուած է
մանաւանդ Ամերիկա գաղթելու,
հիւրընկալ ու ազատասէր հանրա-
պետութեան մը բեղմնաւոր հողին
վրայ իր թշուառութեան դարման
գտնելու համար. վերջին Օգոստոս
ամսու մէջ միայն 3000 հրեայ Ա-
մերիկա գաղթած են, կը հասկցուի
ուրեմն Ամերիկայի անհանգստու-
թիւնը, բայց Մ. Մ. Հէյ իր ծանու-
ցագիրը կը վերջացնէ հանդիսաւո-
րապէս յայտարարելով թէ Մ. Նա-
հանգները չեն կարող, ըլլալ իսկ
անուղղակի կերպով, միջազգային
անիրաւութեան մը ու սխալմունքի
մը մասնակցելու. ու Պէռլինի վե-
հաժողովոյն մասնակցած չըլլալով
հանգերձ, կը միջամտեն ոչ միայն
վասն զի իրենց Մահմանդարութեան
ոգին բռնի գաղթականութեանց
կրնդդիւանայ, այլ մանաւանդ
«Յանուն Մարդկութեան»:

Խնդիրը հոս չի վերջանար սա-
կայն: Ճէյմս Մոնրոյէի վարդա-
պետութիւնը (Ամերիկեան Ամերիկա-
ցիներու) դաւանող ու գործադրող
երկրի մը կողմէ այս անակնկալ
միջամտութիւնը գուցէ տարօրինակ
գար ու անտարբեր թողուր եւրո-

ՖԵԼԵՊԷ, 15 ՄԱՅՍ

ՇՈՒՆԱՅԻ ԱՊԳԱՅԻՆՆԵՐՈՆ

Իրաւունք ազգագրական լրատու գործունէութիւնը կրնայ զարգանալ միայն այն պայմաններում, երբ հասարակական գիտելիքը անհրաժեշտ է իրենց համայնքին, երբ իրենց համայնքը կրնայ իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

Եւ, իբրեւ ժողովրդական լրատու գործունէութիւնը կրնայ զարգանալ միայն այն պայմաններում, երբ հասարակական գիտելիքը անհրաժեշտ է իրենց համայնքին, երբ իրենց համայնքը կրնայ իրենց համայնքին...

Բանի մը տարի առաջ, երբ Լեւոն Սարգսեան ապրումնաբեր ամեն միջոցներէն զերէն փնտրեց իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

Օր մը սակայն, լսեցինք թէ՛ Լեւոն Սարգսեանին, մեզ համար արդէն ծանօթ, կեղծ փետուրները ինչպէս են. պատուոյ ատեն պիտի կազմուի, որովհետեւ դատարանը ծանուցեց...

Տղան զգուշացնում էր իր համայնքին, որ իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

Այն, Պ. Պ. Շումարյանը, Լեւոն Սարգսեանին հաղորդեց մէկ ստորագրուած թուղթով, որով իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

Նամակ վերջացնելէ առաջ ձեռքի առնելով իր թուղթը, որ իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

Երեկոյն Ա. Է. ի տունը երբ վարդօն ուղեց հարցաքննութեան արդիւնքն իմանալու եւ երբ եւս պարզեց թէ ինչն էր իրենց համայնքին անհրաժեշտ է իրենց համայնքին...

«Պարտօ», հարցաքննիչ եւ եղբայր էլի»:

Վարդօյի այդ գովեստն եւ միջոցներով տարբեր տարրեր խօսքերը ինչպէս համար նշանակութիւն չունէին. եւ այդ առաջին օրն ընդհանրապէս կասկածած էր Վարդօյի ընթացքին վրայ եւ այդ օրէն սկսեցին ուշադրութեամբ հետեւիլ Վարդօյի ամէն մէկ խօսքին:

Այդ գիշերը ամբողջ միջոցներով չեցինք միտ տալ Վարդօյի խօսքին. ինչպէս որ Վարդօյի խօսքին չեցինք միտ տալ Վարդօյի խօսքին...

Միտ տալ Վարդօյի խօսքին եւս որովհետեւ եւս ներկայացուցի իրենց... Առաջին բոլորովին անտարբեր մնաց. այդ անտարբերութիւնը կը նշանակէր կանխապէս իրեն լուր տրուելը. այդ բանը միայն Վարդօյի կրնայ ընել եւ անկից վերջ սկսեցին լրտեսել տալ թէ Վարդօն ինչ ատեն ներ Առաքելի հետ կը տեսնուի:

Առաքելը երբ քանիցս ինչի կը դիմէ եւ կը տեսնէ որ նոյն որոշման վրայ անխախտ կեցած է, այլեւս կը յուսահատուի եւ կորույշ քիչ թէ շատ գումարով գոհացում տալ 28 անուակի խնդրոյն. որովհետեւ ինքը յաւ համոզուած էր որ միայն 2,000 ֆրանքի ապրանքով իրեն օձիքն թող չեն տար:

Պիւտոն ինչ նամակաւ մը գէնքերու գողցուելն եւ գողերու փնտրուելն յայտնելէն վերջ ինչի կը յանձնարարէր ըստ կարողութեան աշխատել այդ գողերը գտնելու խնդրոյն մէջ եւ թղթակցել Պ. Չորեանի (Ռոստոմ) հետ, իսկ Վարդօյի մասին բառ մը անգամ զրաւ չէր Պիւտոն:

Պիւտոյի նամակին մէջ Վարդօյի մասին բնաւ անհարկութիւն մը չըլլալն ինչ զարմանալի թուեցաւ:

Առաքելը 2,000 ֆրանքը գրաւելու թէ Պիւտոյին եւ թէ Ռոստոմին գրած է իր արդէն ժամանակին Պիւտոն եւ թէ Ռոստոմ փութացած էին չորանակալութիւն յայտնելու ինչի. բայց երկուքն ալ իրենց նամակներով կը յանձնարարէին պաղարկելու թեմա՞ր գործել եւ խնդրոյն մէջ չաճապօրբ:

Պիւտոյի եւ Ռոստոմի յայտնած չորանակալութիւնը ինչ ալ աւելի կասկածի մէջ ձգեց զէպի Վարդօն. գողութիւն մը որ Վարդօյի ընդհանուր ներկայացուցիչ եղած միջոցին պատահած էր, ուստի պատասխանատուութիւնը Վարդօյի վրայ կը ծանրանար. պատճառն ինչ էր որ Վարդօն թող եւ անտարբեր կը վարուէր այս խնդրոյն մէջ:

Գալով Առաքելի, սա Յ. Ո. ի քով 800 ֆրանքի չափ ապրանք ունէր. Պ. Յ. Ո. ի հետ տեսնուեցայ որ յօժարեցաւ տրամադրութեան ներքեւ գնել մինչեւ խնդրի վերջնալը:

25-ը որ Վարդօյի ընթացքը բոլորովին կասկածելի եղած էր ինչ, եւ չէ՞ որ գործն ինքնին հանելուկ մը դարձած էր եւ գործին մէջ գաղտնիք մը ըլլալուն համոզուած էր. եւ վերջապէս չէ՞ որ ստուգած էր որ Վարդօն ինչպէս գաղտնի կը տեսնուի Առաքելի հետ. ուղեցի այդ 800 ֆրանքի ապրանքը գրաւելու խնդրոյն մէջ Վարդօյի որոշ գոյնը հասկնալու եւ կեղծիքն երեւան հանել:

Երեկոյն Վարդօյէնց տունը գացի եւ հոն գտայ նաեւ Օ. Գ. խնդրեր

պարզեցի եւ այդ ապրանքներու գրաւման գործը Վարդօյին եւ Օ. Գ. ին թողուցի: Վարդօն քանի մը սնտոփ պատճառներով չուղեց գրաւել. եւ իր ցոյց տուած պատճառները երբ ամբողջովին դիւրացուցի, այն ատեն ալ մայ ստիպուեցաւ խնդրել Օ. Գ. ին յանձնել. վերջապէս քանի որ որոշ էր թէ միւս օրը ժամը քանիին պիտի փոխադրուէր ապրանքները Առաքելի միջոցաւ, վերջնական որոշումն տուինք որ Օ. Գ. գրաւէ Վարդօյի հետ միասին: Միւս օրը խնայող թէ Առաքելը իր ապրանքները Պիւտոյի գրկած էր:

Վարդօյի եւ Օ. Գ. ի այս խաղէն պարզապէս երեւան եկաւ թէ Վարդօն կանխաւ լուր տուած էր Առաքելին եւ փոխադրութեան ժամը փոխած էր:

Այլ եւս ինչ համար Վարդօյի այս խնդրոյն մէջ ունեցած կեղծիքն երեւան եկած էր:

Վարդօն իրականացրած եղած էր ինչ համար...:

Վառնայի մէջ արդէն օրուան խնդիր եղած էր 28 անուակի գողութիւնը. Առաքել միշտ միջնորդներ կը բերէր 2,000 ֆրանքի ապրանքներն ալ ազատելու համար. անոր ջանքերն բոլորն ալ ապարդիւն կը մնային. եւ գործին մէջ գաղտնիք մը ըլլալուն համոզուած էր:

Կոչկակար կարապետին հասցէն գտայ, նամակաւ մը հարցուցի իր մեղսակցութիւնը: Կարապետ իսկոյն պատասխանեց նամակին թէ պատրաստ է պէտք եղած անդեկութիւնները տալու: Ինչ օր յետոյ ալ տեղեկացայ որ Կարապետ Պիւտոյի եւ Ռոստոմի հետ թղթակցել սկսած է եւ այդ պատճառաւ էր որ չէր ուզեր ինչ տեղեկութիւններ տալ:

Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոր-Գարի մէջ հետեւեալը կը կարգանք. բայց մեզ հաւատալի չի թուիր:

«Թրքահայ գաղթականների մէջ հայրենիք վերադառնալու ցանկութիւնն այնքան մեծ է, որ դրանցից ոմանք նպատակին հասնելու համար մինչեւ անգամ մահմեդաւորութիւն ընդունելու միտքն են յայտնում, միայն թէ կարողանան ապրել իրենց հարազատներին հետ, հայրենի տան կողքին տակ»:

Այդ մասին ցաւալի տեղեկութիւններ են հասնում մեզ համար «նազիւրի»:

— Նոյն թերթը կը գրէ թէ վերջերս Շուշիի մէջ աւազակները մէկը բռնած ու փախցուցած են, զոր ազատ ձգելու համար 30,000 ռուպլի փրկանք պահանջած են, ցոյց տալով քաղաքին մօտ աղբիւր մը ուր դրամը պիտի ստանային: Բայց ոստիկանութիւնը վարպետ վարուելով, ցոյց տրուած տեղը մարդ կը շնչէ իբրեւ դրամը տանող եւ անտառին շուրջը հեծեալներով կը պատէ. այս կերպով աւազակներէն մէկ երկուքը կը յաջողի բռնել, որոնք «հայ ինտելիգենտ երիտասարդներ են» եղեր: Այս առթիւ Նոր-Գարը կըսէ, «արի

ասա, թէ մենք չենք յաւաքարի մուս. ժամանակի հետ փոխուած են եւ մեր բարքերը»:

— Թիֆլիզի առեւտրական ու գրաւական հրապարակին վրայ հանրածանօթ Գէորգ Մարտիրոսեան Յակոբեան վախճանած ըլլալով, հետեւեալ կերպով իր ստացուածքին բաժանումը տնօրինած է. ամբողջ ստացուածքին շարժական մասը (ոսկեղէն, ակնեղէն) կնոջը պիտի վերաբերի. իսկ անշարժ մասը (տուններ) Ներսէսեան հոգեւոր դպրոցի յատկացուելու է:

Գալով այս կալուածները գործածելու կերպին, հանգուցեալ կտակաբար, իր անտեսագէտի դրականութեամբ, փափաք յայտնած է որ այդ կալուածներու եկամուտը Ներսէսեան դպրոցի հոգաբարձութիւնը 17 հաւասար մասերու բաժնէ, որոնց 3 մասը դպրոցին մէջ չքաւոր մանուկներու ուսումնական դատարարականութեանը յատկացուելու է, իսկ մնացեալ 14 մասը գործածելու է Թիֆլիզի մէջ մասնաւոր հիւանդանոց մը հիմնելու, ուր ընչազուրկ Հայեր պիտի խնամուին, անոնք մանաւանդ, որոնք իրենց աւաղացած տարիքին հետեւանքով որ եւ արհեստով պարապելու անկարող են. իսկ երբ հիւանդանոց հիմնելու հնարաւորութիւնը չիրականանայ, այն ատեն կտակաբար հոգաբարձութիւնը կարծօնէ Թիֆլիզ քաղաքի մէջ բացուելիք հիւանդանոցին մէջ չքաւոր Հայերու համար մէկ բանի մահակալ յատկացնելու, կամ վերջապէս այդ գումարը դպրոցին ծառայեցնելու: Աւելին կայ. իր անշարժ ստացուածքը այսպէս կարգադրելէ յետոյ, կտակաբար իմ մնացեալ հարստութենէն զանազան ազգականներու բաժին հանելով, վերստին իր տարաբաղդ հայրենակիցները կը յիշէ, ու այս անգամ Տաճկահայաստանցիներու բաժնուելու համար կաթողիկոսին գումար մը կը կտակէ. Ռուսահայ թերթի մը կարծիքով, Ներսէսեան դպրոցին կտակուած կալուածները միայն 200,000 ռուպլի արժէք մը ներկայացնելու են:

— Կտակի ուրիշ լուր մըն ալ, ոչ նուազ բարեբաստիկ, վանէ կուգայ. Ռուսահայ աղա Գրիգոր Գիրիբորինիկովի մէկ կտակը վանցիներու 24,000 ռուպլի գումար մը յատկացուցեր է. կտակաբարին այրին այժմ վախճանած ըլլալով, կտակը գործադրելու ատենը հասած է. ու վանի Տեղապահը դիմեր է կտակի գործադիր Դիմիտրի Գիրիբորինի, որ այդ գումարով արտօնուել վանի մէջ կեդրոնական Բարձրագոյն կրթարան մը հիմնել:

— Դերասանուպետ Տ. Պապա. հանի առաջնորդութեամբ Ե. Տ. Շաքարեանի ու Երամեանի ընկերակցութեամբ նոր կազմուած ՅՈՅՍ հայ թատերախումբը լուրջ տրամաբաններ կայացնելու պատրաստ

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Պ. 28 ՄԵՏՈՒԿԻ ԽԱՅԱՊՈՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւին)

Նոյն օրը Վարդօն քովս եկաւ եւ ստուգելով Առաքելի հետ ունեցած տեսակցութիւնն, խնդրեց այդ մասին երկուքին Ա. Է. ի տունը գտնուելու եւ երկարօրէն խօսինք: Եւ հարկ չը տեսայ Վարդօյին ըսել թէ «Սասուն» քաղաքանի մէջ կեղծել կամ անտարբեր մնալը ինչ կը նշակէր:

